Կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«----» ---------- 2018 թվականի N ------ -L

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԶԱՌՅՈՒԾԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԶԱՌՅՈՒԾԻ ՏԱՐԻ ՀՌՉԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կենդանական աշխարհի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը՝ Կառավարությունը որոշում է.

1. Հռչակել 2019 թվականը կովկասյան ընձառյուծի տարի:
2. Հաստատել կովկասյան ընձառյուծի պահպանության 2019 թվականի պետական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված

Կառավարության 2018 թվականի

---------- --- -ի N --- -Լ որոշման

ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԶԱՌՅՈՒԾԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը	Պատասխանատու մարմինը	Ֆին աղ
1	2	3	4	5
1	Ստեղծել միջոցառումները համակարգող հանձնաժողով	Դեկտեմբեր 2018 թ.	ՀՀ կառավարություն, գիտական, հանրային և միջազգային կազմակերպություններ	Ֆին պա
2.	Հայաստանի կենսաբազմազանության մասին ֆիլմի նկարահանում և ցուցադրություն	2019թ. Մայիս	Բնապահպանության նախարարություն Մշակույթի նախարարություն Միջազգային կազմակերպություններ Ստեղծագործական ընկերություններ	Օրե այլ
3.	Կենսաբազմազանության թեմայով ցուցահանդեսների կազմակերպում	2019 թվականի ընթացքում	Բնապահպանության նախարարություն Մշակույթի նախարարություն	Օրե աղ

			Միջազգային կազմակերպություններ	
4.	Կովկասյան ընձառյուծի միջազգային վեհաժողով	2019 թ. Հոկտեմբեր	Բնապահպանության նախարարություն Արտաքին գործերի նախարարություն Գիտությունների ազգակին ակադեմիա	Օրե այլ
5.	Կովկասյան ընձառյուծի թեմայով նամականիշերի, բացիկների թողարկում	2019 թվականի ընթացքում	Բնապահպանության նախարարություն Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն	Օրե այլ